Ը. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 27 ՕԳՈՍՏՈՍ 1905 — ԹԻՒ 743

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 »

Յանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երկիմաստ տեղի ունենալու համար 20 0/0 զեղչ կը լայ:

—o—

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ է

[illegible] եւ դրամ
[illegible] փոխադրութեանց
[illegible]դիմ

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքի
15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքի
20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆՔԻՓԻԼԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՕՅԻՆԲԱԶՈՒԹԻՒՆ ԹԷ ԱՆԿՈՒՄ

—)o(—

Ցաւ ի սիրտ եմ գրում այս յօդուածս, որովհետեւ երբէք չէի կարող երեւակայել թէ դաշնակցական ոեւէ մարմին կամ անհատ կարող էր այս աստիճանի անկում ունենալ ու ես պէտք էլինէի այդ ախուր փաստի արձանագրողը։

Խնդիրը վերաբերում է դաշնակցականների ձեռքով ինձ սպանելու դիտաւորութեան, սրամադրութեան կամ ինչպէս ասում են որոշման։

Այս ամէնը իմ մէջ միայն մի զգացմունք են յարուցանում զօրեղապէս. զզւանք և միայն զզուանք ու անդրդուելիօրէն համոզում որ իմ մեղադրանքները այնքան սարսռեցուցիչ են ժողովրդային միամտութիւնը շահագործող ապրեցիկ աւնեարիստների համար որ նրանք միայն մի ճար են գտել ինձ չեզոքացնելու համար՝ այն է սպանութեան ոճիրը...

Այս խնդիրը բաւական հին է. Բալքանեան մի շարք միամիտ և աղտոտ դաշնակցականների շրջանում. սկսած այն օրից երբ ես դրամները չը յանձնեցի մեծ օրինազանց Բ. Կ. Կոմիտէին։

Այս ձմեռ. փետրուարի մէջ, ստոյգ աղբիւրից իմացայ որ Վարնայի դաշնակցական մի խեղճ ժողովում բարձրանում է ինձ սպանելու հարցը։ Ժողովին մասնակցողների անունները ամբողջովին ինձ յայտնվեց։ Ես միայն արձանագրեցի այդ անունները ու այլ ևս կարեւորութիւն չը տուի, երեւոյթը վերագրելով ժողովի մասնակցողների միամտութեան։ Բայց նոյն օրերում Փիլիպէյից հաղորդեցին որ Կ. Կոմիտէի անդամներից մի երկուսը այդ մտքով սպառնալիքներ են կարդացել իմ հասցէիս։ Չրկին կարեւորութիւն չը տուի. թէեւ համոզվեցի որ Կ. Կոմիտէն տեղեակ է Վարնայի մէջ անցած դարձածին։

Անցաւ բաւական միջոց. այս տեղ է գալիս Ն. Կոմիտէի պատուիրակ Տիգրանեան. նրա սարքած մի ժողովում ժողովականներից մէկը հարցնում է Տիգրանեանին,— Վարդօյի տերօրը երբ պիտի տեղի ունենա՞յ...

Ու Տիգրանեան փոխանակ յանդիմանելու այդ վայրենի բընազդները ունեցողներին, խորհրդաւոր կերպով սուսէ անում և յայտարարում—հանգիստ եղէք, Դաշնակցութեան դրամը ոչ ոք չէ կարող ուտել...

Այդ ժողովի մասնակցողների անուններն էլ արձանագրեցի և բաւականացայ միայն դրանով։

Անցաւ. կրկին բաւական ժամանակ, սպառնական յօդուածը պարունակող «Հորիզոնի» ստացած օրը Աղէքսանդրիայից ստացայ մի անստորագիր և կեղծ գրով զգուշացնող նամակ հետեւեալ բովանդակութեամբ.

—«Վարդօ, որչափ կարելի է շուտ տեղէդ հեռացիր. տերօրիստները շրջապատած են քեզի. Հայ յեղ Դաշնակցութեան Կովկասեան պատասխանատու մարմնի վճիռով։

Հ. Յ. դաշնակ. Կ. Կ.ի Ջրաբերդի ընկերներէն։

ՄԱՀ»

Այս զգուշացումը և «Հորիզոնի» յօդուածը կարդալուց յետոյ երկու բացատրութիւն տի. առաջին, այդ տեսակ մի բան գոյութիւն ունի և դիտմամբ ուզում են հեռացնել ինձ Բուլգարիայից որ դիւրութեամբ կարողանան իրենց անհիմն ոճիրը իրագործել, երկրորդ նպատակ ունեն ինձ վրա սարսափ ազդելով Բուլգարիայից փախցնել ազատ ասպարէզ ունենալու համար։ Այս եզրակացութիւններին գալով. մանաւանդ որ նամակը անստորագիր էր կրկին կարեւորութիւն չը տի. Բայց չորեքշաբթի երեկոյեան Եգիպտոսից ինձ ծանօթ մի անձից, իր սեփական այց կարտի վրա գրված հետեւեալ տողերը ընդունեցի —

«Պ. Վարդօ, պարտք եմ զգում յայտնել Ձեզ որ այստեղ մի քանի տաք գլուխ պարոններ ձեր մասին խիստ սպառնալիքներ արած են... Անշուշտ ամեն զգուշութիւն ձեռք առած էք արդէն եւ կառնէք սրանից յետոյ ձեր կեանքը ապահով կացուցանելու։ Անտարակոյս մի հոսանք է որ պիտի անցնի երթայ։

Տիկնոջ և ձեզ յարգանքներս»։

Այս տեղ արդէն գործը ուրիշ կերպարանք է ստանում. մի մարդ իր ստորագրութեամբ և գրով զգուշացնում է մի դաւադրութիւնից, մեղադրելով որոշ կազմակերպութեան պատկանողների ի հարկէ, ու ես լռելը աւելորդ եմ համարում և որոշում այդ զզուելի փաստերը մէջ բերել ինչպէս տեսնում էք...

Ես չեմ հաստատում [illegible] դաշնակցական մարմ[illegible] պատշաճութիւնը ունենայ այդ տեսակ որոշում տալու, եթէ նա բաղկացած չէ պարզ ոճրագործներից. մանաւանդ որ ես դեռ ոչ մի մարմնից դատված չեմ և ոչ էլ հարցաքննված իմ քայլերիս համար։

Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոն չէ համաձայնել նոյնիսկ «Դրօշակում հրատարակել Պ. Կ. Կոմիտէի իմ դրամները չը յանձնելու համար Դաշնակցութիւնից արտաքսման որոշումը հետեւեալ պատասխանը տալով նրան և պահանջելով որ պատճէնը ուղարկի ինձ։

«Արեւմտեան Բիւրո
1905 մարտ 17 ԺՆԷՎ
Պալքանեան Կ. Կոմիտէին
Յարգելի ընկերներ.

. . . . .
. . . . .
. . . . .

Շարունակելով ձեր բռնած օրինաւոր ընթացքը. դուք ըստ կանոնագրութեան պիտի հրաւիրէք արտակարգ շրջանական ժողով, որը պիտի կանչէ իր ներկայութեանը մեղադրեալը միջոց տալու նրան ինքզինքը պաշտպանելու (յօդ. 129). Եթէ մեղադրեալին տուած բացատրութիւնները ժողովը համարէ ոչ հիմնաւոր և վերահաստատէ Կ Կոմիտէիդ վճիռը, այդ վճիռը Դաշնակցութեան Խորհրդին կոչվէն վաւերացուելէ ետքը միայն դատապարտեալը իսպառ կարտաքսուի Դաշնակցութենէն եւ այս վերջնական վճիռը կը յայտարարուի «Դրօշակի մէջ (յ. 130)

Ներկայ Խորհրդի նիստերը տեւելու են մինչեւ ապրիլ 1 (Ն. տ.). Եթէ շրջանական ժողովի որոշումը կը հասնի մինչեւ այս թւականը կարելի կը լինի ենթարկել Խորհրդի քննութեան եւ հիմնաւորութեան դէպքում վաւերացման. իսկ հակառակ պարագային կը մնայ առաջիկայ Խորհրդին, որ կը կայանայ ներկայ տարեան դեկտեմբերին.

Խնդրում ենք ներկայ նամակի մի պատճէնը հաղորդել նաեւ Վարդօյին.

Ընկերական բարեւներով
Արեւմտեան Բիւրոյ.

Այս տեղ փակագծի մէջ ասենք որ այս գրութիւններ տեղի են ունեցել իմ բաց նամակներից, իմ Կ. Կոմիտէի հետ յարաբերութիւններս խզելուց ու իմ կողմից շրջանից դուրս գալ յայտարարելուց և գրամները չը յանձնելուց յետոյ։

Բիւրոյի այս պատասխանից յետոյ Բ. Կ. Կոմիտէն շրջանական ժողով չը կազմեց և պատճէնը ինձ հասցրեց Խորհրդի զոցվելուց յետոյ որպէս զի ես ժամանակ չունենամ ոեւէ բան գրելու Խորհրդին։ Բիւրոյի այս պատասխանից յետոյ պարզ է որ ես դեռ Դաշնակցութիւնից անդամ արտաքսուած չեմ, ուր մընաց որ սպանելու վճիռ լինէր իմ մասին։ Այս բոլորից յետոյ որոշ է նաեւ որ ես դեռ ներկայացած չեմ դաշնակցական ոչ մի դատարանի և ոչ մի դատավճիռ կայ իմ մասին։

Սակայն, ինչպէս երեւում է իմ հետզհետէ խստանալը այլեւս դաշնակցական մի քանի շէֆերին զրգռում է և նրանք աւելորդ են համարում սանձահարել իրենց զինուորներին, նոյն իսկ տակից թերեւս թելադրում են կատարել ոճիրը, որպէս զի ընդհանուր ժողովում մեղադրեալ Վարդօն իրենց առջեւում չը ցցվի անողոք դատախազի դերում։ Եւ կամ թէ թելադրում են սպառնալ. որպէսզի ես սարսափահար լինելով ետ քաշվեմ իմ բռնած դիրքից։ Ի զուր չանք. երկու

միջոցներն էլ միայն զլանք են յարուցանում իմ մէջ և անպատասխաներ են ինքզինքը մաքուր և ահռելի հոչակող կազմակերպութեան համար։

Ամօթ է։ ուշքի եկէք պարոններ, մի արատաւորեցէք Պետոնների, Բարկէնների արտաշէսների Դաշնակցութիւնը...

ՎԱՐԴՕ

ԶԻՍՐՃԱԼԻՔ

—o—

Կեանքի տեսարաններ աշխարհի չորս կողմում

Օրեան միեւնոյն վայրկեան

Ա.

(Գահիրէ, Եգիպտոսի փարթամ և մեզկ մայրաքաղաքում «Հորիզոն»ի խմբագրութեան մէջ)

«Հորիզոն»ի խմբագրական սեղանի առջեւ ալքիմիկոսի ճակարը մատին յենած նստել է Ա. ու կը խորհի.—Աւ Վարդօն չատ առաջ կերթայ, Բայց Նամակներու տոթիւ գրածս յօդուածին կարեւորութիւն իսկ չը տուաւ. խիստ, չատ խիստ բան մը գրելու է...

—Էվրիկա... (պարոնը բնական գիտութիւններին հետեւած լինելով գիտական այդ բառն է գործածում որ նշանակում է, գտայ). անոր բերած փաստերը հերքել անհնար է, անորոշ բաներ պէտք է գրել. Ժաքէն ալ հերքումի մը պէս բան մը առնել եւ սպառնալ. աղաքները պարզ մարդիկ են կազդուրն. Վարդօն ալ պիտի սարսափի, ետ կենայ, ես ալ իմ հաւատարիմ զինուորիս պարտականութիւնը կատարած պիտի ըլլամ.

Ու ճակատին օգնութեան հասնող ձեռքով գրիչը վերցնելով գրում է.

—Ձեր գրածները գաղանի նպատակներէ թելադրուած է. ինքզինքիդ ձեր անողոք դատաւորներուն առջեւ արդարացնելու համար. այժմ պատերազմական դրութիւն ըլլալով ձեզ դրդող շարժառիթներու մասին խօսիլը կը թողունք աւելի խաղաղ ժամանակի. Ձեր գրածը անհեթեթի ոճիր մըն է. Ու պարոն Ա. գոհ իր խելացի արտադրութիւնից ինքնագոհութեամբ աթոռից բարձրանալով սկսում է շփել իր ձեռքերը...

Հաւատարիմ զինուորը իր պարտականութիւնը կատարել է հանդէպ ազգին եւ կազմակերպութեան.

Բ.

Տեսարանը Բօստօնում է. Ամերիկային յատուկ մի հսկայական շինութեան մէջ ուր տեղաւորված է պզտիկ «Հայրենիք»ի մեծ խմբագրութիւնը իր պճլիկ Վարդանովի միասին, որը սեղանի առջեւ նստած մեծ արագութեամբ կարդում է Տաճկաստանի բոլոր անկիւններից իր Տարաս-կոնցի Տարաբէնի ուղեղում ժընած և աճած յաղթական լուրերը։ Սպանած թուրքերի թիւը հասնում է Մուկտէնի մօտ մեռած ռուսներին։ Ճանկալած ներս են բերում «Նարժում»ը. նա անհամբերութեամբ, գրեթէ բարկացած բաց է անում թերթը և կարդում.

«Սուլթանի դէմ փոչ է եղել. փշրվել են կառքեր. սպանվել են բաւական ժուով ձիեր. Սուլթանին ոչինչ չէ եղել. նոյն իսկ իրեն ուղեկից բարձր աստիճանաւորներին։» Բարկացած առաջին համարը նետում է և վերցնում երկրորդը, ու կարդում. «Զմիւռնիոյ մէջ շնորհիւ պատահարի բացել է հայկական մի մեծ դաւադրութիւն։ Մեծ թուով ձերբակալութիւններ են տեղի ունենում։ Հագին զումարներով ձեռք բերված զէնքերը կառավարութեան ձեռքն են անցնում»...

Վռամեան կատաղած ոտքի վրա է թռչում. «Սուտ կըսէ այս փողոցային թերթը»։

—Իմ հեռագիրներս կըսեն որ Սուլթան սպանուած է, Երլտրզը ողբ ելած. բոլոր փաշաները սպաննուած են։ Անգլիական և ֆրանսական զրահաւորները Պոլիս մտած են... «Նարժում»ը սուտ կըսէ. անձնական հաշիւներէ թելադրված Վարդօն ասանկ սուտ լուրեր կը հրատարակէ, ու «Նարժում»ները վերցնում պահում է որ պատահմամբ խմբագրատուն մտնող Դաշնակցական ընկերները չը կարդան այդ սուտ լուրերը, փողոցային թերթը.

«Նարժում»ների անհետացումովը հաղիւ հանգստացած՝ ներս է մտնում մի Դաշնակցական ընկեր—բարեւելուց յետոյ հարցում.— Պարոն Վռամեան «Նարժում կարդացի՞ր։

— «Նարժում»ը ալ չի հրատարակուիր։

— Ի՞նչպէս չէ. հրամմեցէ՛ք. ես ունիմ։

— Ա՜օ, ինձի մտիկ ըլէ. այդ փողոցային գրութիւնները կարդացողը Դաշնակցական չի կրնար ըլլար։

— Բայց Վարդօն Դաշնակցական է.

— Ա՜չ, օ՜չ. ան Դաշնակցական չէ։

— Ինչպէս չէ՞. դո՛ւք էիք որ դեռ երէկ, «Նարժում»ով ձեր թերթին ճակատը կը զարդարէիք կուսակցի զգեստներու մէջ յեղափոխութեան դրօշը բարձր բարձրած։

—Այո՛, այն ատեն այդպէս էր. բայց հիմա չէ. չե՞ս տեսներ որ մեր մարմինները կը քննադատէ. մեր գործերը կը պզտիկցընէ։ Մեր տպայոց միտքերը կը պզտորէ անոնց աչքերը կը բանայ անանկ խնդիրներու մէջ մտնելու համար, որ երբէք պէտք չէր։ Ախ ինչ ըսիմ ախպար, ես Ընդհանուր ժողովին մէջ խնդիր բրի։ օրակարգի մէջ անցուցի որ «Նարժում» քօնթրոլի տակ դրուի. գիտէի գլուխներուս գալիքը։ արդէն շատ բանի մէջ սկսբէն իվեր հակառակ կերթար «Հայրենիք»ին։ Դրօշակ, Բրօ Հրմէնիա կը քննադատէր։

—Ճշմարտութիւններ կրսէր։

—Ախպար հիմա ճշմարտութիւն դար է. թոյլ մարդոց վէնքը հիմա սուտն է։ Մենք թոյլ ենք. սուտով պիտի վաստկինք։

— Բայց ադ անբարոյականութիւն է, պարոն Վռամեան։ Մի՞ թամտում է «Նարժում» բերող ընկերը։

— Ի՞նչ անբարոյականութիւն ձօ՛. սուտ խօսիլը անբարոյականութիւն է՞։ Էն մեծ բարոյականութիւն պարունակող կրօնքը սուտերու վրայ հիմնված է. քրիստոնէութիւնը։ Ամբոխին հետ ուրիշ կերպ չի ըլլար չե՞ս գիտեր...

Դաշնակցական ընկերը բերանը բաց շլարած մնում է...

ԱՍԵՂ

(Շարունակելի)

ՍԷՕԻԼԻԱ Մ. ՊԼԷՑՔ

6

ԴԷՖԻ

Հայկական Ռօման մը

(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

—o—

Գէ. Դ.

ԴԻՇԵՐԱՄԷՋԻ ԹԱՓՕՐԸ

— Որքա՜ն ցաւալի է այս, ըսաւ ան, օգնելով ինձ զէնի վեր վերցնելու։ Խե՛ղճ կին, չեմ զարմանար։ Հայ կիները վախնալու չատ մը պատճառներ ունին։ Եւ դո՛ւն դարձաւ ինձ, դո՛ւն ատելի թուրքէն չե՞ս վախնար։ Զայնը գորովով լի էր ու վիհ դէմքին վրայ ժպիտ մը կը խաղար։

— Կարծեցինք թէ դուք հայեր էք, պատասխանեցի միամտօրէն ու աներկիւղ։ իր դէմքն ու վարմունքը ամէն կասկած փարատած էին։—«Ես քնաւ թուրք տեսած չեմ։»

— Բնա՛ւ թուրք տեսած չե՞ս... Չե՞ս գիտեր թէ Հայաստանը թուրքերէ կը կառավարուի։

— Միայն անոնցմէ ոտնակոխ ըլլալը լսած եմ, ըսի բոպէական արագութեամբ։

— Լաւ է որ, սիրուն երգչուհիս, փղշտացիներուն ձեռքը չես ինկած, բայց ես հոս սպասելու չեմ. հայ մը պէտք է ղրկեմ այդ խեղճ կինը բերելու համար։ Մենք չենք կրնար թողուլ ձեզ։ Ձեր ինչպէս հոս գալը պէտք է ուրիշ ատեն մը պատմես։ Հիմա ինձ հե՞տ կուգաս թէ... թէ կսպասես մինչեւ սլ...

— Ես Միքէլս մօտը պիտի մնամ, ըսի հպարտօրէն։ Ու ան հեռացաւ։ Հազիւ ժամանակ ունեցայ Միքէլի պաղ ձեռքը շփելով ու գլուխը կուրծքիս վրայ հանգչեցնելով՝ փփսալ.— Սպահով ենք... փրկուած ենք... Արտաքանին պիտի վերադառնանք։ Ճիշդ այս պահուս հայ մը պիտի գայ մեզ տանելու։ Ու տակաւին խօսքս չաւարտած՝ երեւցաւ հայ գիւղացիի տարազով գիրուկ հուժկու աշխոյժ մարդ մը Գոտիին մէջ խրած կր ատրճանակ և դաշոյն մը։ Օգնեց ինձ Միքէլն վեր վերցնել ու իրեն երկար ատենէ իվեր ծանօթ լեզուով սկսաւ քաղցրութեամբ խօսիլ էնոր հետ։ Բաւական տեղ մեզի ընկերացաւ։ Միքէ բայց տեսնելով օֆիսերին ատելի համազգեստը ետ ընկրկեցաւ ու սկսաւ ուժգին սարսռալ։ Բայլ մը եւս առաջ չկր անցներ։ Գգուանքներս ու ապահովութիւններս ապարդիւն մնացին։ Հարկադրուեցայ քարկանալ։ Ա՛հ, Միքէս, եթէ այժմու գիտցածս այն ատեն, Գիտնայի, է՛ն գորովալիր խանդաղատանքով մը պիտի մեղմանար սիրտս։ Սակայն ատի դժնդակ պարագայ մ'էր։ Հոս մեզ յօժարակամ փրկելու բարեկամական խմբակ մը կար, անտարակոյս, ամենէն կարեւորը՝ մեր պատճառով իրենց ժամանակը կորսնցնելով։

Դանի մը անհետեւանք փորձերէ վերջ օֆիսերը, որ սոյն տեսարանը կը դիտէր, ինձ նշան ըրաւ։ Իր ձիուն քով կանգնած էր ան։ Պատրաստուեցայ անոր մօտ երթալ, սակայն Միքէլն, վայրագօրէն ինձ փաթաւելով՝ ետ քաշեց։ Ծպնապայոյզ օֆիսերին նայեցայ։ Ժպիտ մը երեւցաւ դէմքին վրայ բոպէ մը, ու երկրորդին՝ փեսաւորի նման իր բազուկներուն մէջ վեր բարձրանալով՝ ձիուն վրայ դրուեցայ։ Ճամբայ ելլելու նշանը տրուեցաւ։

— Ո՛չ Միքէս, գոչեցի։

— Էն հանգիստ է. ըսաւ ան, տե՛ս։

Ու դառնալով՝ տեսայ որ Միքէն ալ մեր ետեւէն իր հայուն հետ կը քալէր ու տակաւին իր ձայնը կը լսէի որ կըսէր—«Միքէն մինչեւ մահ հաւատարիմ պիտի մնայ»։

Ենհանգիստ կերպով թամփին վրայ չալժտկիլ սկսայ

«Օ՜, թո՛ղ տուր լլնեմ ես Միքէլին հետ պիտի քալեմ։ Ես անկէ զօրաւոր եմ։» Օֆիսերը, իր գեղեցիկ արաբական նժոյգին սանձը թեւին անցուցած՝ քովէս կը քալէր։

— Ուժի խնդիր չէ այս, գեղեցիկ երգչուհիս, դուն իմ բանտարկեալս ես ու քեզ փախցնելու նպատակ չունիմ։

— Չեմ փորձեր փախչիլ. միայն Միքէլին քովէն կը՞ քալեմ։ Ո՜հ, վըստահէ՛ ինձ։

— Կը նախընտրեմ իմ մրցանակս ինձի պահել. ժպտեցաւ. դուն իմ լաւագոյն վստահութիւնս ես։ Առաջին ծառերու շեղջին, կամ վազող գետակի մը և կամ փոսի մը որ հանդիպիք. Միքէն քեզ պիտի քալէ անդին ու ինձմէ ծածկէ։ Ո՛չ, ո՛չ, ու ապայարեց ծանրախոհ.—եւ արդէն բաւական ժամանակ կորսնցուցինք մեր յանձնառու եղած գործին համար մէկ բոպէի յապաղումը մա՛հ կը նշանակէ...

— Շատ ճշմարիտ է խորհեցայ ու։ Հառաչ մը հանելով՝ լռեցի Խումբը կը բաղկանար միմիայն եօթը մարդոցմէ և իրենց ստաջնորդէն։ Իրմէ զատ բոլորն ալ հեծիոտն էին։ Բոլո՛րն ալ ուժեղ, յաղթանդամ ու գործունեայ երիտասարդներ, և իրենցմէ պահանջուած ամէն տեսակ պարտականութեանց ընդունակ։ Բլլար այդ արշաւանք կամ ընդդիմադրութիւն։ Միքէին զրկուածին նման գիւղական տարազ հագած էին ու իրաքանչիւրը կը կրէր ատրճանակ և դաշոյն մը։ Ատեն մը անչուկ յառաջացանք ապա խմբապետը ըսաւ.

— Ո՞ւր կուզես որ տանիմ, գեղեցիկ երգչուհիս։ Ուր որ կը ցանկաս պիտի տանիմ քեզ ապահով բայց ոչ այս գիշեր։

— Ա՜չ այս գիշե՛ր. կրկնեցի մեղ-

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԽՈՒԶԱԿՐՈՒԹԻՒՆ

—○○—

Կարմիր Շրջանին արիւնի օրերը նորէն կամայկամաց ժողովնալ սկըսած են հայութեան գլխուն։

Ցուլիս 21 ի ուրբաթէն ի վեր Պոլսոյ բանտերը դիզուած են հայերով. ահ ու սարսափը ինկած է Պոլսոյ հայ բրնակչութեան վրայ՝ մէկ կողմէն եւ Բրոպայի անիշխանականի խօսք կըլլայ, իսկ միւս կողմէն հայերու մեծարանակ ձերբակալում։

Ժորիս անուանով պելգիացիին ըրած անբանական խոստովանութիւնները չատ սուղի նստեցուն Հայութեան վրայ։ Ի՞նչ ապուշ փաստաբանութիւն... իբր թէ հայերը գործադրեն այսպիսի նուրբ եւ գժուարին արարք մը եւ իրենց մասնակից կանչեն օտարական մը... Ռուսահայի եւ ռուսահայ օրիորդի մասնակցելու օյինպազութիւնը Եւրոպայի մէջ հրնարուած գիտ մըն է սուլթանական գործակատարներու կողմէ. որոնք չատ հոյակապ պատճառներ ունին նման անիմաստ հեքեաթներ յառաջ քշելու եւ կլլեցնելու միամիտ եւրոպական հասարակութեան, որ տակաւին բոլորովին խակ է համիտական խաղերուն։

Այդ բաւական չէր եւ ահա այս օրերս Զմիւռնիոյ մէջ գտնուած ուսմբերը եկան քիչ մը եւս ծանրացնելու արդէն զարհուրելի կացութիւնը։

Հետեւելով անգլիական օրաթերթերու հասած հեռագիրներուն, կըրնամ ըսել որ միմիայն Զմիւռնիոյ մէջ ձերբակալուածներու թիւը քանի մը հարիւրի կը հասնի։ Այս ուսմբերուն հետ գործ ունենալ կը կարծեն Համիտիէ մզկիթին առջեւ պայթող ուսմբը. ուսաի խաուութիւնը կառնէ կրկին կատարի կերպարանք Պոլսոյ մէջ։ Այժմ ամէն կողմ պտտող լուրը հետեւեալն է.—իբր թէ հայերը մտադիր են եղեր Սուլթանի գահակալութեան օրը Զմիւռնիոյ մէջ մեծ իրարանցում առաջ բերել, փակելով կազերը, յարձակելով կառավարական հիմնարկութիւններու վրայ, եւն եւն։

Կրնա՞նք ժխտել. ի հարկէ ոչ, Սուլթան Համիտի գործակալները ձեզի օրինակ կը բերեն մակեդոնացիներու համանման արարքները Սելանիկի մէջ եւ շրջակաները։ Ի՞նչու հայերն ալ չը փորձեն նոյնը ընել, քանի որ կըսեն թէ մակեդոնացի յեղափոխականներու հետ ալ գործակցութեան մէջ են...

Ահա պատճառաբանութիւն. իսկ այս պատճառաբանութիւնը իրաւացի դարձնելու պատրուակներ կուտան նաեւ շարք մը այնպիսի անձեր, որոնք, լսելով ռուսահայ, Սոֆիա, Զուիցերիա անունը, այդ նկատմամբ բառ մը արտայայտած պահեանուն յօնքերնին վեր կը նետեն, աչքերնին չլմսրեն, ժպիտ մը կը խաղցնեն...

Այժմ ոչ սէկի համար գաղտնիք չէ որ Սուլթանի մահափորձը պալատական դաւ մըն է եւ սարքուած իրեն չատ սերձաւոր անձերէ։

Երիտասարդ Թուրքերը մատ ունեցած են ատոր մէջ թէ ոչ, յայտնի չէ բոլորովին։ Եթէ խնդիրը քննենք իրենց խոսքերէ ու գրուածներէն, մանաւանդ համբաւաւոր Ահմէտ Բիզայի ֆանֆարոն բացատրութիւններէն, կարելի է ըսել որ մասնակցութիւն մը ունին։

Բայց սուլթանի ծառաները նպաստակ չունին այդպիսի լուսաբանութիւններ լսելու։ Պէտք է ձերբակալել, բանտարկել, չարչրկել հայերը... Այս է Սելտրզի Կարմիր Ցիտրային անդառնալի հրամանը։ Թէ ինչպէս ի գործ կը դրուի այդ սարսափելի հրամանը՝ ծանօթ է մեզ բոլորիս...

Վերջին բոպէին Պոլսէն անգլիական նշանաւոր օրաթերթի մը կը հաղորդուի թէ մեծ վախ կայ 1895-96 թուական մը բացուելուն հայութեան համար։

Ու առիթները պակաս չեն Համիտին՝ եղեռնական այդ ահաւոր չրջանը վերանորոգելու։

Մ. Ցոլակ

ՀԵՐՔԱՔԻՄ

Ուրախութեամբ Զմիւռնիայից եկած հաստատ տեղեկութիւններ հիման վրա յայտարարում ենք որ Իզմիրի յեղափոխական գործիչը, ոչ մի դեղարան չէ մտել. նա պատահմամբ կրծքից և ոչ թէ ձեռքից վիրաւորվել է իր սենեակում, տունից դուրս է եկել տունը գոնէ առժամապէս խուզարկութիւնից ազատելու. ճանապարհին բռնել են ոչ նրան, այլ նրան ընկերացող ընկերոջ, սակայն նա էլ ամբոխի ձեռքով ազատվել է ոստիկանների ձեռքից։ Այնպէս որ խուզարկութիւնները սկսվել են ոչ գոլծիչի խոստովանութեան շնորհիւ, որը ազատ է ինչպէս և միւս ընկերը։

Մեզ հաւատացնում են որ ոչ մի տօկիման չէ բռնված այդ գործիչի տան մէջ։

Առհասարակ երկու վտանգված ընկերներն էլ անձնազոհութեան և ինքնաուրացումի կատարեալ օրինակներ են հանդիսացել։ Իզմիրի հոկայական գործը զոհ է լոկ պատահմունքի։ Այնտեղ դեռ ոտքի կանգնելու ժամանակը իսկ որոշված չէ եղել։

ՁԱՐԻՓԸ ԿԸՇԱՐՈՒՆԱԿՈՒՍ

—○—

«Ազգ չա՛ր և չնացող նշան խնդրէ յերկնից և նշան մի տացի նմա, բայց նշանն Յովնանայ։»

ԱՒԵՏԱՐԱՆ

Վնասէ ի վնաս, անկումէ յանկումն, ամեն օր, ամեն ժամ եւ միշտ կը գահավիժի ազգը իր յոռի, տգէս, չահասէր և անմիտ գործիչներու ձեռքով։ Այս կերպէ յեղափոխական գործը, այսպէս և կրթականը եւն։

Ո՛չ մի կողմ, ո՛չ մի տեղ մխիթարական երեւոյթ մը չկայ ազգին եթէ ոչ ներկան՝ գոնէ ապագան ապահովող, և ի՞նչու, վասնզի գործի վրայ գտնուող մեր ալաները կառաջնորդուին մեր մէջ անձնական, խնամիական և հէմշէրիական չահասէր սին ու սինլքոր հաշիւներով, եւ գործելով միշտ սխալ միշտ յիմար ու վնասակար գործեր, բացարձակապէս գիտութեամբ եւ ո՛չ պատահաբար կամ անգիտութեամբ եւ դեռ կը զարմանանք, թէ ի՞նչու մեր ազգ. գործերն չեն յաջողիր, թէ ինչո՞ւ մի մխիթարական նշան չերեւիր ո՛չ մի տեղէ։ Ի՞նչ նշան տեսնել կը ցանկաք խեղճ հայեր, երբ գործի գլուխ կանգնէք մարդեր որոնք խիղճ չունին գոնէ անկեղծ ըլլալու չափ. խելք չունին իրենց ստանձնած պաշտօնը կամ կոչումը գոհացնելու չափ եւ ի հարկին փորձուելու ընդունակութիւնն ալ չունին իրենց նախորդ ազգաշնաս գործերու հետեւանքը տեսնելէ յետոյ։

Անցեալ տարի Վառնայի ազգ. վարժարանը կատարեալ մի բաբելոն էր, վարժապետ վարժապետի դէմ, վարժապետներ տեսչի դէմ, այս բոլորը մէկէն Հոգաբարձութեան դէմ. Հոգաբարձութիւնը Թաղականութեան դէմ. մինչեւ իսկ աշակերտ եւ աշակերտուհի մէկը միւսին կամ ա-

---

մաձայն ու մտամոլար, ո՛հ, խեղճ հայր։ Առաջին անգամն էր որ կորսուելու վախ և այդ գժնդակ բաղդէն խուսափելու համար ի գործ գըրած ճիգերս հանդարտած ըլլալով, իր վշտին ու հոգեկան տագնապին վրայ կը խորհէի։

— Ո՞վ է հայրդ ի՞նչ է իր անունը, հայցուց ընկերակիցս։

— Հօրս անունը Արամաքան է, պատասխանեցի, և... շարունակելու վրայ էի, սակայն, սանձին ակամայօրէն դպչելով գեղեցիկ նժոյգը կանգնեցուցած էր

— Արամաքա՞ն, գոչեց ան։ Բայց ոչ Եգրարի իմաստուն և բարի Արամաքանը։

— Մենք հոն կը բնակինք, պատասխանեցի, ու իմ հայրս թէ՛ իմաստուն է և թէ՛ մարդասէր, բայց և այնպէս խիստ արտում կը վախնամ թէ պիտի մեռնի եթէ գիս կորսնցնէ։

«Հուրի»—այս էր նժոյգին անունը—կրկին կը յառաջանար սակայն տէրը կարելի եղածին չափ մօտէս կը քալէր Թէպէտև արեւելքէն կարմիր գիծ մը արշալոյսը աւետեց. այսուամենայնիւ, լուսինը տակաւին բաւական լոյս ունէր ինձ հմար ազատ կերպով շուրջս եղող առարկաները և մանաւորապէս ընկերակցիս դէմքին յարափոփոխ արտայայտութիւնները դիտելու։

— Արամաքա՞ն, կը խոսէր ան ինքնիրեն, որքա՞ն տարօրինակ բան.. ապա յանկարծ յարեց.— օխմ անունս Սիւլէյման է։ Իսկ քո՞ւկդ։

— Դէֆի, պատասխանեցի։

— Հայկական անուն մը չէ այդ, ըսաւ զարմանքով.—ո՛չ, հրէական, վրայ բերաւ։ Հայրդ հարո՞ւստ է, Դէֆի։

Դ է ֆ ի . . . ո՛չ, քան քաղցր կը հընչէր անունս իր շրթունքներէն... Երբէ՛ք այդքան զողտրիկ անուն մը չէի կարծած նախապէս։ Իր հարցման պատասխանեցի.

— Ընդհակառակը, շատ աղքատ է ան։ Քանի մը ոչխար և արջառ ունի, ու թէպէտեւ հոկայ ապարանքի մը մէջ կապրինք, սակայն այդ բոլորովին աւերակ է, և, շարունակեցի վստահօրէն, մինչեւ երկկ առաւօտ իր պարիսպներէն դուրս չէի ելած։

— Երէ՛կ առաւօտ... գոչեց ան, և դուն քու առաջին պատեհութիւնդ գործածեցի՛ր փախչելու և ինքզինքդ կորսնցնելու. Օ՛, Դէֆի։

Կրկին լսելով անունս, իրապէս սարսռացի։ Իւր քաղցր թրթռուն ձայնը ուղղակի հոգւոյս մէջ կը թափանցէր ու կը բուներ հոն։ Ի՞նչ կորով. ի՞նչ հմայք. ի՞նչ մագնիսականութիւն -որը որ կուզէք—պատճառդարձաւ այս ոտարականին անուանս գործածումը ազդել վրաս։ Որքան որ ալ քաղցր էր այդ զգացումը, հեռացնել ջանացի զայն։

— Կը փափաքէի որ Դէֆի չը կանչէիք ինձ, ըսի խրախտօրէն. չեմ սիրեր. Եթէ ըսէք, այլ եւս ձեզի հետ չը պիտի խոսիմ։ Ես միայն հօրս ու Սիքէիս Դէֆին եմ։

— Կը ցաւիմ, սակայն, դէմքէդ կը տեսնեմ որ բարկացած չես, ժպտեցաւ ան։ Երանի՞ թէ դուն ալ ինձ Սիւլէյման կանչէիր։ Զե՞ս ըսեր, յարեց ժպիտով մը։

Ցիրաւի այս ջոփէն աւելի էր Օտարական մ'էր ան և... թուրք մը։ «Ցիմա՛ր Դէֆի, ճամբուդ նման խե՞լքդ ալ կորսնցնելու վրայ ես։ Անհանգիստ կերպով թամփին վրայ կրկին շարժտկիլ սկսայ։

— Պէտք է վար իջնեմ, պոռացի, թոյլ տա՛ր անմիջապէս վար իջնեմ. բայց ան չը լսել ձեւացնելով, անխրոմով յառաջ կերթար ձիուն գլխուն քոմէն։—„Այս սոսկալի բան է", ըսի ինքնիրեմս։ Կրկին կանչեցի—կրկին պատասխան չկար։ «Օ՛, Սիւլէյման» գոչեցի յուսահատ, և ան անմիջապէս մօտս եկաւ։

— Այդ չատ լաւ է, Դէֆիս։ Մտադրած էի քեզ իմ իսկական անունովս կանչել տալ և հիմա ըսիր։ Ի՞նչ կուզես, թագուհիս։

— Ես թագուհի չեմ, թէպէտեւ Միքէն մանկութեանս ինձ Շէպայի թագուհին կը շինէր։ Ես ուրիշ բան չեմ —բայց եթէ հայ թշուա՞ռ ստրուկ մը

Խիստ դառնացած խոսեցայ։ Զեմ գիտեր թէ ի՞նչ բան մղեց զիս։ Սեւլակ տանս լուռ առանձնութեան մէջ չատ անգամներ խորհած էի տարաբաղդ Հայաստանիս կացութեան վրայ, սակայն զգացումներս ուրիշի մը արտայայտելու փորձութեան մէջ չէի ինկած երբէ՛ք։

— Դէֆի, գոչեց ան, դուն հայ ստրուկ մը չես։ Ո՛ւր որ ալ երթաս, դուն մարդկանց կառավարիչը պիտի ըլլաս —բայց, ձայնը իջեցուց այստեղ, թէպէտև մէկը չկար լսելու,— ես եկած եմ ազատել Հայաստանդ՝ հալածանքներէ—իսկ քու դժբաղդ քոյրերդ ստրկութենէ աւելի զգրալի կացութենէն։

— Ո՛հ, Սիւլէյման գոչեցի, ես ալ քեզի հետ գամ. ես ալ ուրիշ ժամ տ'Արք մը կըլլամ ու քու հայերդ յաղթութեան կառաջնորդեմ։

— Ժպտեցաւ, բայց դէմքը չատ մտախոհ կերեւէր։ Արեւելքը մատնացոյց ընելով՝ «Արշալոյս է, ըսաւ, եթէ ցորեկէն առաջ այդ լեռները չը հասնինք, բոլորս ալ կրնանք մեռած համարուիլ։

(Շարունակելի)



մենը ամենուն պէս. այս ամենը տեղի ունեցաւ մինչեւ տեսչի անկումը, տեսուչ մը որ անկարող գտնուեցաւ իւր վրայ դրուած յոյսն արդարացնելու կամ խայտառակութիւններ չը յարուցանելու—կամ գոնէ եղածները խոհեմութեամբ դարմանելու։ Տեսչի անկումին յաջորդեց վարժապետներու խժլտուքը, կռիւը, աղմուկը եւ վերջապէս արտաքսումը։ Ու այս ամենի մէջ «Որպէս ոչխար ի սպանդ վարեցան.» խեղճ անմեղ երկսեռ ուսանողութիւնը։ Ժամանակին այս ամենը դիտեց, գրեց և քննադատեց «Շարժումս» լրագիրը պոռաց ու կանչեց, բայց մեր Հոգաբարձու եւ Թաղական ազաները՝ ականջնին բամբակ թխեցին, երբեմն այո՛, երբեմն ո՛չ, երբեմն ալ այո՛ եւ ո՛չ միանգամայն, մինչեւ որ տարին բոլորեցաւ եւ. ազգին մի քանի հազար ֆրանքը գլորեցաւ վասն ոչինչի.

Ու հիմայ, այս տարի, յառաջիկայ նոր տարեշրջանին համար Վառնայի Ազգ. երկսեռ վարժարանաց տեսչութեան կը լսենք թէ, կոչուած է դարձեալ այն անձը որ անցեալ տարի տեսուչ էր. որ գործնականօրէն իւր բացարձակ անկարողութիւնը ի հանդէս բերած էր եւ որ վերջապէս գոնէ մի տարեշրջան չէր կարողացած բոլորել. ու մենք դեռ երկինքէն նշան կը խնդրինք.

Խնդիրը բարոյապէս քննելով շատ ապշեցուցիչ է. եթէ Հոգաբարձութիւնը մի անծանօթ, նոր պաշտօնեայ ընտրէ որ իւր կոչման անյարմար դուրս գայ. ամօթ չէ. վասնզի Հոգաբարձութիւնը չէ կարող մարգարէանալ բայց երբ արդէն փորձով ճանչցուած անկարողը կը վերընտրէ մեծ ամօթ է եւ չենք կարող գիտնալ թէ ի՞նչ կը նշանակէ այս . . . . . կամ ի՞նչ նշան է.

Խնդիրը նիւթապէս քննելով դարձեալ արդարացուցիչ պարագայ մը չերեւիր վասնզի անկարող հոչակուած նախորդ տեսուչը 1400 ֆրանք կ'ստանար, մինչ այս տարի բոլորովին նոր անձնաւորութիւններ՝ որոց վրայ տարակուսելու ո՛չ մի պատճառ կար 1200 ֆրանքով պատրաստ էին ծառայել. Հոգաբարձութիւնը զանոնք նամակով կամ հեռագրով կանչեց բերաւ, բանակցեցաւ անոնց հետ ու երբ անոնք 1200 ֆրանքով ծառայել ուզեցին խոհեմուկ Հոգաբարձութիւնը սկսաւ հրէական սակարկութիւններ ընել՝ 1000 ֆրանք վճարել խոստանալ ու վերջապէս խնդիրը ձգձգել մինչեւ որ յուսահատեցնելով գանեցուց զանոնք որոնք հեռացան ու անոնց հետ եւ այն բանիմաց Հոգաբարձուն՝ որ իմանալով ամեն անցուդարձի միտքն ու հոգին . . . . . զզուանօք ետքաշուեցաւ, այս ի՞նչ նշան էր կամ վիճակ.

Այս ամենը դեռ խնդրոյ կեղեւն է, ներքին եւ փափուկ հաշիւներու դեռ չենք մտներ. միայն ինչ որ օր ցորեկով պարզապէս կերեւի առանց ջուր վերցնելու՝ անոր մասին կը խօսինք եւ կը պահանջենք որ Հոգաբարձութիւնը ուղղէ իւր սխալը քանի դեռ ժամանակ կայ. վասնզի նորընտիր Հոգաբարձութիւնը որ քիչ օրէն գործի պիտի սկսի վստահ ենք թէ ամենը գնով ու միջոցով չը պիտի կարենայ ընդունիլ այսպիսի անտարամարան եւ ձախող ընտրութիւն մը. եւ դեռ ան դին «Իրաւունքի խմբագիրը թո՛ղ ճգնի պաշտպանել «Մեծ Ձախողուածը» թէ «Այդ ժողովրդի մի մասի կարծիքն էր ևն. ըսելով.» ըսել է թէ ժողովրդի մի մասի կարծիքը ըստ «Իրաւունքի» ոչինչ կամ աննշան կըլլայ եղեր. այս ի՞նչ նշան է. ու դեռ մենք երկինքէն նշան կը խնդրենք. եւ մեր դպրոցներէն ալ լոյս, ուսում եւ կրթութիւն կ'սպասենք....

Ո՞ւր ես Ադամ.....(*)

25 Օգոստ. 1905 ՏԱՊԱՐ

Վառնա

(*) Յօդուածագիրը լաւ կանէր որ իր յիշած կանդիտաները մէջտեղ դնէր, որպէսզի կարելի լինէր համեմատել թէ իրօք ո՞վ է աւելի յարմար անձանութները. թէ Խուշպուլեանը.

Ծ. Խմբ.

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ(*)

—()o()—

Սիրելի Վարդօ,

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Կը շնորհաւորեմ քեզ սկսած կռուիդ համար, երբոր առիթ ունենանք իրարու քով գալու կը տեսնուինք.

. . . . . .

Քոյդ . . . .

Պուլկարիա . . . . քաղաք

(*) Խ.— Նամակագիր ընկերը Բուլգարիայի. ինտելիգէնտ յեղափոխութեան հաշուով երբէք չապրած, դիրքով պարոն է եւ հին դաշնակցականներից.

Ուրախ ենք որ այդ տեսակ ընկերները մէջտեղ են գալիս. Այդ երեւոյթները փաստում են որ Վարդօի պահանջները եւ դիտողութիւնները ժառանգութեան նիւթ են եղած եւ ուրիշների համար. ու սրանք էլ ժամանակ են համարում կազմակերպութիւնը դնել հաստատուն եւ իրապէս հայրենիքին օգտակար հիմերի վրա եւ իրօք անձնազոհ մարդոց ձեռքում.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Օգոստոս 22-23 սարսափելի հրդեհ մը մօտ երեք հազար տուն ոչնչացուցեր է. տները մեծ մասամբ կը պատկանին հրէաներուն, հայերուն և պուլկարներուն.

Այրուած են դպրոցներ. եկեղեցիներ. Մօտ ութ հազար հոգի զուրկ են այժմ բնակարանէ. Սուլթանի հրամանով վրաններ դրուեր են հրկիզեալներուն տրամադրութեան տակ և հաց կը բաժնուի անվնասը ահագին է.

—Մեծ հրդեհ պատահեր է Սէլանիքի մէջ.

—Օգոստոս 25 ին Զմիւռնիայէն կը հեռագրեն որ ոստիկանութիւնը գտեր է 1500 քիլօ տինամիտ, շատ մը ռումբներ դպրոցի մը մէջ որ նշանակուած են եղեր Պոլիս ղրկուելու համար.

—Թուրք կառավարութիւնը կը մերժէ Մակեդոնիոյ քօնթրոլին խնդիրը. Վեց պետութեանց դեսպանները Բ. Դրան յայտարարած են որ իրենց նշանակած քոնթրոլէօրները Պոլիս հասնելուն պէս Բ. Դրան միայն պիտի հաղորդուի որ անոնք իրենց պաշտօնավարումը սկսած են, ուրիշ ոչինչ.

—Օգոստոս 23ին Զմիւռնիայէն կը հեռագրեն հետեւեալը. 70 քիլօյի չափ ուժանակ գտնուեր է Կրէտոտ Լիօնէի երկաթէ քսսաներէն միոյն մէջ, որ վարձու տրուած է Յակոբ Թագւորեան անունով անձի մը. Թագւորեան անմիջապէս ձերբակալուած է.

ԳԵՐՄԱՆԻՀՆ ԵՒ ԹՈՒՐՔԻՆ

«Մաթէնի» Պէրլինի մասնաւոր թղթակիցը թէլէֆօնով հետեւեալը կը հաղորդէ.— Այսօր, Սուլթանի գահակալութեան 30ամեայ տարեդարձին առթիւ թերթերը յօդուածներ կը նուիրեն Ապտիւլ Համիտին. և կզբաղին Թուրքիոյ և Գերմանիոյ յարաբերութիւններով.

«Պէրլինէր Թակէպլաթ» մասնաւանդ իր միտքերը կարտայայտէ բացորոշապէս ըսելով.— ինչպէս որ ալ ուրիշները գատեն իր թագաւորութիւնը, մենք գերմանացիներս ոչ մէկ պատճառ ունինք Սուլթանէն դժգոհ ըլլալու.

Շնորհիւ Սուլթանի դէպի գերմանն տարրը միշտ յայտնած համակրանքի և Վիլհէլմ կայսեր ղգուշ, ճարպիկ դիւանագիտութեան մեր արուեստագործական, առեւտրական և դրամական շահերը այժմ Թուրքիոյ մէջ այնքան կարեւոր են որ մենք դէպի այդ կայսրութեան բախտը անտարբեր չենք կրնար ըլլալ։ Թուրքիան դեռ գերման գործունէութեան մեծ ասպարէզ կուտայ։ Քանի Թուրքիոն պէտք ունի ամրութեանց, նաւերու, երկաթուղիներու, ելեքտրիք թրամվայներու և այլն, և մինչեւ իր սեփական ժամանակակից արհեստագործութիւնը ունենալը Գերմանացիներու շահագործման համար գործ և ձեռնարկութիւններ կան.

Բայց այս ամենու համար հոն պէտք է խաղաղութիւն և այս պատճառով, մեր շահերուն համար, ինչպէս և Սուլթանի. մենք ուրիշ աւելի լաւ բաղձանք չենք կրնար յայտնել. քան այն որ յայտնի ճնշել սպասմութիւնները որոնք ներքնապէս պատառ պատառ կընեն իր կայսրութիւնը.

ՌՈՒՍԻԱ

Ծովային նախարարութեան մէկ հրամանովը ամիրալ Ներոպաթով և անոր երեք ընկերները պաշտօններէն հեռացուած են.

—Դանձակէն օգոստոս 24ին կը հեռագրեն թէ Շուշիի կէսը բոցերու մէջ է. Հրդեհը ձգած են չարագործներ. Շուշիի շրջանին մէջ արիւնոտ ընդհարումները կը շարունակուին. հայերը գրաւած են հին բերթը. Խօճալի կայարանի մօտ բուռն հրացանաձգութիւն տեղի ունեցեր է.

—Բեթերսպուրկէն գերմանական թերթի մը կը հաղորդեն հետեւեալը. Ռիթէի փառաւոր ընդունելութիւն մը կը պատրաստուի. իմիջի այլոց «կանանց փոխադարձ օգնութեան ընկերութիւնը» ուղերձ մը պիտի ներկայացնէ հետեւեալ մակագրով— «Հաշտութիւն ստեղծողին երախտագէտ ամուսիններու և մայրերու կողմէն».

ՃԱՊՈՆԻԱ

Օգոստոս 25ին Թոքիոյէն կը հեռագրեն.— այստեղ ցոյց եղաւ հակառակ հաշտութեան։ Ամբոխը քարուքանդ ըրեր է կառավարութեան «Քոքոմիր» թերթին պիւրօն.

Եան վիրաւորուածներու Շատ մը ձերբակալութիւններ տեղի ունեցեր են.

ՀԱՄԼԷԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

—)o(—

Ամսի 27-ին Շաբաթ երեկոյեան ծանօթ ողբերգու արուեստագէտ պ. Կ. Գալֆաեան տեղւոյս թատերասէրներու և թատերասիրուհիներու բարեհաճ մասնակցութեամբ պիտի ներկայացնէ Շէքսպիրի հռչակաւոր ՀԱՄԼԷԹԸ.

Կը խնդրուի յարգելի հասարակութենէն որ իրենց ներկայութեամբ պատուեն սոյն ներկայացումը. Տոմսակները այսօրուընէ կը ծախուին ժամը 4-6 Սասուն սրճարանը. իսկ ներկայացման օրը Թատրոնում. Ներկայացումը պիտի սկսի ժամը ճիշդ 9-ին առանց նկատի ունենալու ներկաներու թիւը.

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Յովհաննէս Պալուեան անուն անձը 35-36 տարեկան Քղիի քաղաքէն 8 տարիի չափ. Պոլիս մնացած եւ Պանք Օթոմանի ցոյցէն ամիս մը ետքը Պոլսէն մեկնած Աւստրիացի աղջկան մը հետ միասին. ժամանակ մը Պուլկարիոյ Վառնա քաղաքը մնացած, անկէ Ռումանիա անցած է. ժամանակ մը ալ հոն անցուցնելէ ետքը ուր երթալը չը գիտցուիր. եթէ գիտցողներ կան ուր ըլլալը եւ կամ հաստցէն թող հաճին իմացնել խմբագրութեան ինչու որ երկու եղբայրները Յովսէփ եւ Պօղոս Պալուեան Ամերիկայէն կը փնտռեն զինքը.

Печатница на П. Глушковъ-иСие, Варн